

Վերականգնվող էներգետիկայի զարգացումը ՀՀ-ում՝ որպես նորարարական էկոհամակարգերի զարգացման գործոն

Մոմջյան Մարիամ Բ.

Հայ-Ռուսական համալսարան, կառավարման և բիզնեսի ամբիոն,
տ.գ.թ., դոցենտ (Երևան, ՀՀ)
mmomjyan@mail.ru

Ավետյան Արման Ա.

Հայ-Ռուսական համալսարան, կառավարման և բիզնեսի ամբիոն,
տ.գ.թ., ավագ դասախոս (Երևան, ՀՀ)
arman.avetyan@rau.am

Սահակյան Վալենտինա Ա.

Հայ-Ռուսական համալսարան, կառավարման և բիզնեսի ամբիոն
ավագ դասախոս (Երևան, ՀՀ)
valentina.sahakyan@rau.am

Գյուլգազյան Արման Ա.

Հայ-Ռուսական համալսարան, կառավարման և բիզնեսի ամբիոն
գիտաշխատող (Երևան, ՀՀ)
arman.gyulgazyan.99@gmail.com

ՀՏԳ 338.2; EDN: JVALQS

Q28

Հանգուցաբառեր՝ էներգիա, վերականգնվող էներգիայի աղբյուրներ, նորարարություններ, էկոհամակարգեր, վերականգնվող էներգիա:

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝
21T-5B293 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում*

Развитие возобновляемой энергетики в РА как фактор развития инновационных экосистем

Момджян Мариам Б.

к.э.н., доцент, кафедра управления и бизнеса,
Российско-Армянский университет (Ереван, РА)
mmomjyan@mail.ru

Аветян Арман А.

к.э.н., старший преподаватель, кафедра управления и бизнеса
Российско-Армянский университет (Ереван, РА)
arman.avetyan@rau.am

Саакян Валентина А.

старший преподаватель, кафедра управления и бизнеса,
Российско-Армянский университет (Ереван, РА)
valentina.sahakyan@rau.am

Гюлгязян Арман А.

научный работник, кафедра управления и бизнеса,
Российско-Армянский университет (Ереван, РА)
arman.gyulgazyan.99@gmail.com

*Исследование выполнено при финансовой поддержке
Комитета по науке РА в рамках научного проекта № 21T-5B293.*

Аннотация. Для жизнедеятельности и развития человека необходима энергия: электрическая, тепловая, транспортная. А технологическое развитие приводит к большему потреблению энергии. Чтобы удовлетворить этот спрос, ресурсы, извлеченные из земной коры, ископаемое топливо или энергоносители, потребляются с большей скоростью, чем те, которые генерируются природой.

У Армении нет подтвержденных запасов ископаемого топлива (угля, нефти или природного газа). Используемые в Армении газ и нефтепродукты полностью импортируются. Газ составляет 63% первичных энергоносителей, большая часть которых – 80% импортируется из России, а остальное – из Ирана.

Около 50% производственных мощностей Армении имеют возраст 40 лет. Они подлежат закрытию в краткосрочной и среднесрочной перспективе. Эксплуатация Мецаморской АЭС была продлена до 2026 года. Малые ГЭС производят всего 13% от общей электроэнергии (7,3 млн кВт/ч), по состоянию на январь электроэнергией вырабатывали 178 малых ГЭС, суммарная мощность которых составила около 328 МВт.

Учитывая все это, очень важно уделять больше внимания возможностям развития солнечных станций и ветряных электростанций в Армении.

Возобновляемая энергия сегодня является перспективным направлением развития энергетики и обеспечивает устойчивое развитие этой сферы. Важным фактором развития возобновляемых источников энергии является использование эффективных и инновационных инструментов регулирования этой сферы. В этой связи необходимо проанализировать динамику развития сферы возобновляемой энергетики и факторы, обуславливающие это развитие, что делается в представленной работе. Возобновляемая энергетика (ВИЭ) ныне является перспективным направлением развития энергетики и обеспечивает устойчивое развитие этой сферы. Важным фактором развития возобновляемой энергетики применение эффективных и инновационных инструментов регулирования этой сферы. В связи с этим, нужно анализировать динамику развития ВИЭ сферы и факторы, обуславливающие это развитие, что и сделано в представленной работе.

Ключевые слова: энергетика, возобновляемые источники энергии, инновации, экосистемы, возобновляемая энергетика.

Development of Renewable Energy in Armenia as a Factor of the Development of Innovative Ecosystems

Momjyan Mariam B.

*Ph.D., Associate Professor, Department of Management and Business, RAU
mmomjyan@mail.ru*

Avetyan Arman A.

*Ph.D., Senior Lecturer, Department of Management and Business, RAU
arman.avetyan@rau.am*

Sahakyan Valentina A.

*Senior Lecturer, Department of Management and Business, RAU
valentina.sahakyan@rau.am*

Gyulgazyan Arman A.

*Research Fellow, Department of Management and Business, RAU
arman.gyulgazyan.99@gmail.com*

The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 21T-5B293.

Abstract. Energy (i.e. electrical, thermal) is necessary for human activity and development. However, technological development leads to greater volumes of energy consumption. To meet this demand, the resources extracted from the earth's crust - fossil fuels or energy carriers - are consumed at a faster rate than they are created by nature.

Armenia has no proven reserves of fossil fuels (coal, oil or natural gas). The gas and oil products used in Armenia are completely imported. Gas makes up 63% of primary energy sources, most of which, 80%, is imported from Russia, and the rest from Iran.

About 50% of Armenia's electricity production machinery are 40 years old. they are subject to closure in the short and medium term. The operation of the Metsamor nuclear power plant has been extended until 2026. Small hydropower plants produce only 13% of total electricity (7.3 million kWh). As of January 2017, 178 small HPPs produced electricity, the total capacity of which was about 328 MW.

Considering the above-mentioned, it is very important to pay more attention to the development opportunities of solar plants and wind farms in Armenia.

Renewable energy is now a promising area of energy development and ensures the sustainable development of this sphere. An important factor in the development of renewable energy is the use of effective and innovative instruments for regulating this area. In this regard, it is necessary to analyze the dynamics of the development of the renewable energy sector and the factors that determine this development, which is done in the presented work.

Key words: energy, renewable energy sources, innovations, ecosystems, renewable energy.

Մինչ ԽՍՀՄ փլուզումը Հայաստանը բարձր արդյունաբերական հանրապետություն էր՝ զարգացած էներգետիկ համակարգով: Սակայն անկախությունն ձեռք բերելուց հետո սեփական

վառելիքի պաշարների բացակայության պատճառով երկիրը հայտնվեց շատ ծանր դրության մեջ, հատկապես 90-ականների սկզբի շրջափակման տարիներին: Կառավարությունը

կանգնել էր էներգետիկ ճգնաժամից դուրս գալու սուր խնդրի առաջ: Էներգետիկայի ոլորտում պետական քաղաքականության («Հայաստանի Հանրապետության էներգետիկայի մասին» օրենքում ամրագրված) հիմնական սկզբունքներից է եղել խթանել հանրապետության էներգետիկ անկախությունը, այն է՝ տեղական էներգետիկ ռեսուրսների և այլընտրանքային էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրանց համար այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրումների խրախուսման իրավական և տնտեսական մեխանիզմների կիրառումը [1]:

2007-2018 թ. Հայաստանում կանաչ էներգիայի զարգացման ամենաիրատեսական ուղղություններն էին՝

1. Փոքր հիդրոէլեկտրակայաններ,
2. Քամու ուժով ստեղծվող էներգիա,
3. Կենսազանգվածի օգտագործման վրա

հիմնված էներգիա:

Հայաստանում առանձնապես հզոր տեմպերով սկսեցին զարգանալ փոքր հիդրոէլեկտրակայանները: Այժմ փոքր ՀԷԿ-եր են կառուցվում գետերի, ռոռզման խողովակաշարերի, խմելու ջրի խողովակաշարերի վրա:

Փոքր ՀԷԿ-երի և էներգիայի այլ վերականգնվող աղբյուրների կառուցումը խթանելու նպատակով Հայաստանն ընդունեց փոքր ՀԷԿ-երից մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկման մեթոդաբանություն, որը նվազեցնում է կարգավորման ռիսկը և բարենպաստ ներդրումային միջավայր է սպահովում փոքր ՀԷԿ-երի համար:

Արտադրված էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկի հիմքում ընկած է եղել անհրաժեշտ եկամուտների ապահովման սկզբունքը, ըստ որի՝ ընկերության կողմից էլեկտրաէներգիայի վաճառքից ստացված եկամուտը պետք է ապահովի էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացում, էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ հիմնական կապիտալի մաշվածության փոխհատուցում, համապատասխան շահույթի ստացում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային սկզբունքով՝ հիմնական միջոցների ձեռքբերման (կամ կառուցման) արժեքով՝ ելնելով դրանց օգտակար ծառայության ժամկետից:

Նորակառույց փոքր ՀԷԿ-երի՝ օգտակար և օգտագործման համար պիտանի ճանաչված ամբողջ հիմնական կապիտալը համարվում է մեկ ակտիվ՝ ըստ դրանց ընդհանուր արժեքի, որի նկատմամբ ընդունված միջին մաշվածության դրույքաչափը կազմում է տարեկան 3%:

Նախկինում կառուցված և սեփականաշնորհված փոքր հիդրոէլեկտրակայանների

հիմնական կապիտալը բաժանվում է երկու խմբի.

ա) սեփականաշնորհման պահին առկա հիմնական կապիտալ, որը համարվում է մեկ միավորված ակտիվ և գնահատվում է մասնավորեցման պայմանագրի արժեքով,

բ) սեփականաշնորհումից հետո ձեռքբերված (կամ կառուցված) հիմնական կապիտալ, որը գնահատվում է դրա ձեռքբերման (կամ կառուցման) արժեքով:

Սույն կետի ա) խմբի համար կիրառվում է 6.6% մաշվածության միջին դրույքաչափը, իսկ բ) խմբի համար հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է առանձին՝ ելնելով դրա օգտակար ծառայության տևողությունից՝ 3.3%:

Ներդրումային կապիտալով կառուցված հիդրոէլեկտրակայանների համար այս կապիտալի վերադարձման ժամանակահատվածում վճարունակությունն ապահովելու նպատակով կարող են կիրառվել ավելի բարձր ամորտիզացիոն դրույքաչափեր, քան նախկինում նշվածները, սակայն տարեկան 16,67%-ից ոչ ավել: Այս պարագայում հիմնական կապիտալի արժեքի 50%-ից ավելին չի կարող դուրս գրվել:

Շրջանառու միջոցների վերադարձման ժամկետը լրանալուց հետո հիմնական կապիտալի չգրված արժեքի նկատմամբ (նրա օգտակար ծառայության մնացած ժամանակահատվածի համար) կիրառվում է համապատասխան գծային մաշվածության դրույքաչափ՝ ապահովելով դրա դուրսգրումը:

ՀԷԿ-երի շահույթի հաշվարկման հիմքը շահագործման ժամանակաշրջանում կատարված ներդրումների գուտ ակտիվների արժեքն է (միայն ակտիվների ավելացման համար)՝ հիմք ընդունելով ստացված շահույթի և մաշվածության հաշվարկը, որը հաշվի է առնվում միայն դրանց իրականացումից հետո, համաձայն «Լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով ներկայացված ներդրումային զարգացման ծրագրերի հաստատման կարգի»:

Եկամտաբերության դրույքաչափը, ըստ մեթոդաբանության, հաստատվել է 20% դրույքաչափով (առանց հարկերի): Այսինքն այս մեթոդաբանության մեջ նշված մաշվածության և շահույթի դրույքաչափերն ապահովում են կապիտալի վերադարձ 4-5 տարի ժամկետում:

Ներդրողների կապիտալի վերադարձը ժամանակին ապահովելու համար Հանձնաժողովն ընդունել է առանձին որոշում, ըստ որի՝ սահմանված սակագները ենթակա չեն վերանայման (Հանձնաժողովի նախաձեռնությամբ) առնվազն 5 տարի [2] :

Սակագների սահմանման գործընթացի առավելագույն թափանցիկությունն ապահովելու և պոտենցիալ ներդրողների համար

գրավչությունը բարձրացնելու նպատակով մեթոդաբանության մեջ սահմանվել են նաև շահագործման և պահպանման ծախսերի հիմնական նորմերը (մասնավորապես՝ վերանորոգման և աշխատողների թվի նորմերը):

Վերոնշյալ մեթոդաբանության ընդունումից հետո հնարավոր դարձավ կրկնապատկել գործող ՀԷԿ-երի թիվը, իսկ նրանց կողմից մատակարարվող էներգիայի քանակը հասցնել հանրապետության ընդհանուր արտադրանքի 2%-ի:

Սակայն այս ցուցանիշները բավարար չէին, և արդյունաբերությունն էլ ավելի ազատակամացնելու համար 2003 թ. ընդունված մեթոդաբանության համաձայն՝ որոշվեց հաշվարկված սակագների տարբերակից անցնել, այսպես կոչված, «մարզինալ» սակագների տարբերակին:

Ներկայումս վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզավորումն իրականացվում է էներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզավորման կարգով, որը հաստատվել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թ. նոյեմբերի 1-ի թիվ 374Ն որոշմամբ, իսկ վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկն իրականացվում է Հանձնաժողովի 2015 թ. ապրիլի 22-ի 88Ն որոշմամբ հաստատված սակագնի հաշվարկման մեթոդիկայի համաձայն: Վերականգնվող էներգիայի աղբյուրներից մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագները 01.07.2020 թ.-ից մինչև 01.07.2021 թ. ընկած ժամանակահատվածում կազմել են. [2]

ա) գետերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների համար՝ 4,6 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի),

բ) ոռոգման ջրատարների վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի համար՝ 3,01 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

գ) խմելու ջրի խողովակաշարերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի համար՝ 2,07 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

ե) մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ և մինչև 01.11.2018 թ. լիցենզավորված հողմակայանների համար՝ 8,4 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

զ) մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 02.11.2018 թ.-ից հետո լիցենզավորված հողմակայանների համար՝ 4,6 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

է) մինչև 1 ՄՎտ դրվածքային հզորությամբ և մինչև 01.11.2018 թ. լիցենզավորված արևային էլեկտրակայանների համար՝ 8,4 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

ը) մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 02.11.2018 թ. հետո լիցենզավորված արևային էլեկտրակայանների համար՝ 4,6 ԱՄՆ ցենտ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի).

Վերջնական օգտագործողների համար միջին կշռով սակագինը՝ 8,1 ԱՄՆ ցենտ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ): 30 ՄՎտ-ից ավելի հողմակայանների և 5 ՄՎտ-ից ավելի հզորությամբ արևային էլեկտրակայանների համար էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաները կտրամադրվեն պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում՝ վերականգնվող էներգիայի սակագների հաշվարկման մեթոդաբանության համաձայն, 2008 թ.՝ հաշվի առնելով գնանի փոփոխությունները և ՀՀ դրամի փոխարժեքը:

Վերականգնվող էներգիայի կայանների 2015-2020 թթ. սակագների դինամիկան ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգիայի կայանների տեսակը	2015	2016	2017	2018	2019	2020
Գետերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ	23,631	23,753	23,805	23,864	24,276	24,402
Ոռոգման ջրի խողովակաշարերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ	15,751	15,832	15,867	15,906	16,181	16,265
Խմելու ջրի խողովակաշարերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ	10,502	10,556	10,579	10,605	10,788	10,844
Հողմային էլեկտրակայաններ	42,426	42,645	42,739	42,845 23,864*	43,585 24,233*	43,811 24,323*
Արևային էլեկտրակայաններ			42,739	42,845 23,864**	43,585 24,233**	43,811 24,323**

Կենսազանգված	42,426	42,645	42,739	42,845	43,545	43,811
--------------	--------	--------	--------	--------	--------	--------

Աղյուսակ 1. Վերականգնվող էներգիայի կայանների 2015-2020թ թ. սակագները (դրամ/կՎտժ սառնոց ԱԱՀ) [5]

▪ Մինչև 02.11.2018 թ. լիցենզավորված և մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ հողմակայաններ,

▪ Մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 02.11.2018 թ.-ից հետո լիցենզավորված արևային էլեկտրակայաններ:

Առավելագույն սակագների մասին որոշում կայացնելուց հետո հնարավոր դարձավ խոսել Հայաստանում տեղի ունեցած վերականգնվող էներգիայի կայանների շինարարական բումի մասին: 2007-2020 թթ. ընթացքում Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրվել է ավելի քան 150 լիցենզիա փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, և 2021թ. հունվարի 1-ի դրությամբ շահագործվող փոքր ՀԷԿ-երի թիվը հասնում էր 189-ի՝ 382 ՄՎտ դրվածքային

հզորությամբ: 2020 թ. վերջին այս ՀԷԿ-երի արտադրությունը կազմել է հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի մոտ 11%-ը: Ներկայումս ևս 23 փոքր ՀԷԿ՝ 48 ՄՎտ դրվածքային հզորությամբ, գտնվում են նախագծային փուլում: Բոլոր փոքր ՀԷԿ-երը մասնավոր անձանց սեփականությունն են:

Ֆիքսված սակագների կիրառման արդյունքների համաձայն՝ վերջին 10 տարիների ընթացքում փոքր ՀԷԿ-երի կողմից էլեկտրաէներգիայի արտադրությունն ընդհանուր արտադրության 2%-ից աճել է՝ հասնելով մինչև ընդհանուր արտադրված էլեկտրաէներգիայի 11%-ի: Վերականգնվող էներգիայի կայաններից էլեկտրաէներգիայի արտադրության դինամիկան ներկայացված է Աղյուսակ 2-ում:

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլն կՎտժ)	8036.2	7710	7750	7798,1	7315,3	7762,9	7776.9	7632.3	7723.4
Վերականգնվող էներգիայի աղբյուրներ օգտագործող էլեկտրակայաններ ավելի քան 30 ՄՎտ հզորությամբ (միլիոն կՎտժ և %)	1751	1433.1	1307.8	1369.3	1393.8	1407,2	1314.1	1415.4	946.4
	21.7%	18.6%	16.8%	17.1%	19.0%	18,1%	16.9%	18.5%	12.25%
Վերականգնվող էներգիայի աղբյուրներ օգտագործող էլեկտրակայաններ ավելի քան 30 ՄՎտ հզորությամբ (միլիոն կՎտժ և %)	57.5	744.1	688.9	839.9	959,6	864.3	1011.1	972.2	855.2
	7,15%	9.2%	8,8%	10,7%	13,1%	11,1%	13%	12.73%	11.07%

Աղյուսակ 2. Էլեկտրաէներգիայի արտադրությունը վերականգնվող էներգիայի կայաններից 2012-2020 թթթ. [5]

Աճի տեմպի վրա ազդել են նաև որոշ պայմաններ, որոնք կապ չունեն գնագոյացման հետ, մասնավորապես՝

1. Փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի երաշխավորված գնում 15 տարվա ընթացքում,

2. Լիցենզիաների տրամադրման պարզեցված ընթացակարգ,

3. Մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց երաշխավորված վճար (ուղիղ պայմանագրերով):

4. Վարկերի արտոնյալ տոկոսադրույքներ:

Այսինքն կանաչ էներգիայի զարգացման խնդիրները ոչ միայն գնագոյացման մեջ են, այլ

նաև պահանջում են իրավական և տեխնիկական հարցերի համալիր լուծում:

Հարկ է նշել, որ սահմանային դրույքաչափերի կիրառումն ունի իր թերությունները՝

1. հաշվարկվածի համեմատ ավելի բարձր սակագներ ստանալու հնարավորություն,

2. պոտենցիալ կարողությունների իրատեսական օգտագործման վրա տնտեսական մեթոդներով ազդելու անհնարինություն,

3. իրական ներդրումների ծավալի թերագնահատում հարկումից խուսափելու համար:

Հաշվի առնելով Հայաստանում փոքր հիդրոէներգետիկայի զարգացման դինամիկան՝ 2018 թ.-ից Հայաստանում վերականգնվող էներգիայի ոլորտում տեխնոլոգիական միտում-

ները սկսել են արևային էներգիայի զարգացման բում, և առաջին անգամ ՀՀ-ում սահմանվել են արևային էլեկտրակայաններից մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագներ: Արևային էլեկտրակայանների կառուցման լիցենզիաները տրվել են ընդհանուր 210 ՄՎտ սահմանաչափով:

Շրջակա միջավայրի վրա էներգիայի ազդեցությունը նվազեցնելու և վերականգնվող էներգիայի օգտագործման ոլորտում տեղական և օտարերկրյա ներդրումները խթանելու նպատակով Հայաստանում որոշակի աշխատանքներ են տարվում նաև էլեկտրաէներգիայի այլ այլընտրանքային աղբյուրները, ինչպիսիք են՝ հողմային էլեկտրակայանները և կենսազանգվածը զարգացնելու համար:

Մասնավորապես, պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում լիցենզավորվել է 1 խոշոր արևային էլեկտրակայան՝ Մասրիկ 1-ը՝ 55 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Բացի այդ առաջիկայում սպասվում է այլ խոշոր ներդրումային ծրագրերի իրականացում, որոնց շրջանակներում առավել շահավետ պայմաններով ակնկալվում է արևային էլեկտրակայանների կառուցում: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագիրը նախատեսում է 400 ՄՎտ ընդհանուր հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման երկփուլ մրցույթ, որից առաջին փուլի սակագինը գնահատվում է 2,99 ԱՄՆ դոլար /կՎտժ, իսկ երկրորդինը՝ 2,95 ԱՄՆ ցենտ/կՎտժ:

ՀՀ Վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի նախաձեռնությամբ ընթանում է արդյունաբերական մասշտաբով 4 արևային էլեկտրակայանների կառուցման մրցույթային փաթեթների նախապատրաստումը: Այդ փաթեթներից է Հայաստանի Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) և գերմանական Kreditanstalt fuer Wiederaufbau

(KfW) բանկի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվող՝ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված ծրագիրը, որի նպատակներից է մասնավոր ձեռնարկություններին (Հաճախորդ) հասանելի դարձնել վարկային միջոցներ՝ մինչև 500 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայաններ կառուցելու համար:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ արտոնյալ սակագների կիրառումն ապահովում է վերականգնվող էներգիայի զարգացման ակտիվացում, ինչը շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ապահովող նորարարական էկոհամակարգերի զարգացման գործոն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության օրենք էներգետիկայի մասին
2. Սակագների հաշվարկման մեթոդիկա՝ հաստատված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.04.2015 թ.
3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 374Ն-ի կողմից հաստատված էներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը.
4. ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումները՝ «ՎԷ» կայանների համար սակագներ սահմանելու մասին (29.05.2015 թ. N157H, 25.05.2016 թ. N128H, 31.05.2017 թ. N209H, 30.05.2018 թ. N2105 N.,
5. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաշվետվությունները https://psrc.am/contents/fields/electric_energy/el_energ_reports.

*Տժանա/Հանձնվել է՝ 11.09.2022
Рецензирована/Գրախոսվել է՝ 20.09.2022
Принята/Ընդունվել է՝ 26.09.2022*